

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԱՆԴԵՐՍԵՆ

ԺՈՒՆԻՍԿՈՒԼԱՐԵՐ

ԻՇԽԱՆԻ

ՆՈՐ

ԶԳԵՍՏԸ

ՊԵՏՐՈՒՏ 1931 ՅԵՐԵՎԱՆ

8578

839.815
Ա-58

11 FEB 2013

ԻՇԽԱՆԻ ՆՈՐ ԶԳԵՍՏԸ

Վաղուց, շատ վաղուց մի իշխան ե լինում: Այս իշխանը զուգվել-զարդարվելն ախքան եր սիրում, վոր իր բոլոր փողերը հագուստի վրա յեր ծախսում: Զորատեսերը, թատրոնները, զբոսանքները հենց նըրանով ելին գրավում իշխանին, վոր նա կարողանար ցույց տալ իր զգեստը: Որվա ամեն մի ժամին իշխանը նոր զգեստ եր հագնում, պալատականներն ուրիշ իշխանների համար ասում են. «Իշխանը խորհրդումն ե», իսկ սրա համար ասում ելին «Իշխանը դերձակի մոտ ե»:

Պալատական կյանքը շատ ուրախ եր անցնում: Զարդարվել ամեն ուր ոտար յերկրներին հյուրեր ելին գալիս: Յեվ մի անգամ ել, ինչպես ե լինում, պալատ են դա-

1616

839-815

U-58

-6 NOV 2011

լիս յերկու խաբերա: Նրանք իրենց ձևացնում են ախպիսի վարպետ շուկահներ, վորոնց ձեռագործը միակն ե լինելու ամրողջ աշխարհում:

Այդ գործվածքը վոչ միայն արտակարգ գեղեցիկ ե, — ասում ելին նրանք, բայց և զարմանալի հատկություն ունի: Այն մարդը, վորը հիմար ե, և, ինչպես ասում են, իր տեղում չի, նրան տեսնել չի կարող:

— Հենց ախպիսի զգեստ ե ինձ պետք, — մտածում եր իշխանը, — չե վոր լես դրանով կիմանամ թե իմ պալատականներին ով ե իր տեղում, ով ե խելացին, ով ե հիմարը: Թող այդ կտորը շուտով ինձ համար գործեն:

Իշխանը խաբերաներին առաջուց մեծ կանխավճար ե տալիս, վոր նրանք իսկույն գործի անցնելին:

Պալատականները յերկու դագդյահ են դնում և իրենց ախպես ձևացնում, վոր իբրև թե շատ տաք-տաք աշխատում են: Նրանք աշխատանքի համար պահանջում են ամենանուրը մետաքս և գույն մաքուր վոսկի:

1537-81



Բայց այդ բոլորը դնում են իրենց գոր-
պանները և սկսում են նստել դատարկ
դազգյահների առաջ առավոտից մինչև ուշ
գիշեր:

— Մի տեսնել եմ ուզում թե ինչպես
ե գործն առաջ գնում,— մտածում ե իշխանը:

Բայց նա այդտեղ հիշում է գործված-
քի զարմանալի հատկությունը և կարծես
թե իրեն կորցնելու պես ե լինում: Իհար-
կե նա վախենալու թան չունեիր, բայց ելի՜...
լավ կլինեիր, փոր մի ուրիշը գնար տեսնե-
լու:

Լուրը, այդ հրաշալի գործվածքի լուրը,
թուով քաղաք և ամեն մեկն ուզում եր ի-
մանալ թե ով ե իր ծանոթներից հիմարը
և իր տեղում չլինողը:

— Առաջինը կուղարկեմ նրանց մոտ
իմ ազնիվ ծերունի նախարարին, — ասում
եր իշխանը, — նա այնտեղ կտեսնի ձեռա-
գործը: Նա շատ խելոք ե և իր գրաված
պաշտոնին արժանի:

Յեվ անա ծերունի նախարարը ներս ե
մտնում այն սենյակը, փորտեղ դազգյահնե-
րի առաջ նստած ելին խաբեբաները:

— Տեր վողորմյա, — մտքումն ասում է նախարարը, — աչքերը չուած, չե վոր լես վոչինչ չեմ տեսնում:

Լավ իմացեք, վոր մտքումն եր ասում, վոչ լսելի:

Ուրաքանչեւը հարգանքով խնդրում են նրան, վոր մոտենա և ասի թե իրեն դուր գալիս է ձեռագործի նկարներն ու գուլները: Նրանք ցույց եյին տալիս իրենց դատարկ դագայանները, իսկ խղճուկ նախարարը ինչպես ել աչքերը չեր չուում, վոչինչից վոչինչ չեր տեսնում:

Ասենք վոր տեսնելու բան ել չկար:

Միթե լես հիմար եմ, — մտածում եր առաջին նախարարը, այդ վոր չեյի սպասում, մտքիցս չեր անցնում: Աստված, դու ազատես, վալ թե մեկն իմանա, միթե լես իշխան դառնալու անարժան եմ... Վոչ, վոչ, լես չեմ կարող ասել թե գործվածքը չեմ տեսնում:

— Ինչո՞ւ վոչինչ բան չեք ասում մեզ, — հարցնում է ջուհակներից մեկը:

Ո՛հ, սքանչելի լե, — պատասխանում և ծերունի նախարարը, — նայելով ակնոց-

ների միջով: — Ինչպես ու նուրբ նկար, ինչ վառ գույներ: Այո, այո, լես կղեկուցեմ իշխանին, վոր ինձ չափազանց դուր յեկավ ձեր աշխատանքը:

— Աշխատելու միշտ պատրաստ ենք, — ասում են խաբեբաները, ու սկսում են գովաբանել իրենց ձեռագործի նկարներն ու գուլները, նրանց ներգաշնակութունը:

Նախարարը շատ ուշադիր լսում է նրանց, վոր հետո այդ ամենը հաղորդե իշխանին: Այդպես ել արավ:

Հիմա խաբեբաններն ել ավելի մեծ չափով մեծաքս ու վոսկի ելին պահանջում ու դնում իրենց գրպանները:

Հետո իշխանը մի ուրիշ պալատական ուղարկեց ջուհակների մոտ: Դրա գլուխն ել այն յեկավ, ինչ վոր յեկել եր առաջին նախարարի գլուխը: Նա նայեց, նայեց, բայց վոչինչ չտեսավ, բացի դատարկ գագդյահները:

— Ե՛, ինչպես է ձեզ դուր գալիս, — հարցնում են խաբեբանները, — ցույց տալով չեղած ձեռագործը, նրանկարներն ու գուլները:

— Յես հիմար չեմ, — մտածում եր
պալատականը, — նշանակում ե, վոր յես իմ
տեղում չեմ: Այ քեզ բան: Բայց պետք ե
ցույց տամ, վոր յես տեսնում եմ գործ-
վածքը:

Յեվ սկսում ե չեղածը գովել:

— Հրաշալի ձեռագործ ե, — նա զեկու-
ցում ե իշխանին:

Ամբողջ քաղաքը սկսում ե խոսել այդ
գործվածքի մասին:

Վերջապես ինքը, իշխանն ե ուզում
տեսնել այդ հրաշալիքը դեռ դազգյահի
վրա: Մի ամբողջ խումբ ընտիր պալատա-
կաններ հետն առած, վորոնց թվում և աֆն
նախկին յերկուսը, գնում ե խաբեբաների
մոտ:

— Բա հրաշալիք չե՛, — ասում են աֆն
յերկու նախարարները, վոր արդեն տեսել
ելին գործվածքը: Տեսեք և հիացեք: Խնչ
նաշխ — ի՛նչ նաշխ, ի՛նչ նկար, ի՛նչ ներդաշ-
նակ գուլներ: Նրանք յերկուսով մատերը
շարժում ելին դատարկության մեջ և աֆն-
պես ելին յերևակայում, վոր բացի իրեն-
ցից բոլորը տեսում են գործվածքը:



— Այս ինչ բան է,— մտքում ասում էր իշխանը, — լես վոչինչ չեմ տեսնում: Այժմ քեզ փորձանք: Յես հիմա՞ր եմ, ի՞նչ եւ կամ թե իշխան լինելու անարժան եմ, անպետք եմ: Այդ հո անտանելի բան կլիներ ինձ համար:

— Ո՛, շատ գեղեցիկ է, հրաշալի լե,— ասում է վերջապես իշխանը: Գովասանքի արժանի բան է, լիովին արժանի:

Յեվ նա գոհ թեքում է գլուխը, դիտում դատարկ դադգլանները, բաց չի ուզում ասել, վոր վոչինչ չի տեսնում: Իշխանի չքախումբը աչքերը չորս արած դիտում է գործվածքը և միաձայն կրկնում:

— Շատ և շատ գեղեցիկ է, միանգամայն հրաշալիք:

Իշխանին խորհուրդ են տալիս, վոր նա այդ կտորից իր համար զգեստ կարել տա ասն հանդիսավոր լերթի համար, վոր շուտով լինելու չե:

— Հիանալի, սքանչելի—այդ եր լըսվում ամեն կողմից: Բուլորն ել ցնծում ելին ուրախութունից:

Իշխանը խաբեբաներին շքանշաններ է

ընծայում և նրանց պալատական ջուլհակներ նշանակում:

Մեծ հանդիսի նախընթաց ամբողջ դիշերը նստում են աշխատելու, համարյա 16 մոմ վառում, վոր իշխանի նոր զգեստացուն իր ժամանակին հասցնեն: Նրանք այնպես ելին ցուց տալիս, վոր իբրև թե դազգյահից կտորը վեր են առնում, մկրատով ձևով և հետո ասեղներով կարում առանց թելի:

Վերջուպես նրանք հայտարարում են:

Պատրաստ ե:

Իշխանն իր չքախմբի ուղեկցությամբ զալիս է նրանց մոտ իր նոր զգեստը հագնելու, զգեստավորվելու: Խաբեբաները բարձրացնում եին իրենց ձեռքերը, իբրև թե բան են բռնել ու ասում:

Այժմ քեզ շալվարը, այժմ քեզ բաճկոնը, այժմ քեզ վերնագգեստը: Հրաշալի հագուստ: Սարգսթելի պեսթեթե ջես զգում, վոր մարմնիդ վրա բան կա: Հենց այդ է դրա հրաշալի լինելը:

— Այո, այո.— ասում ելին պալատականները, թեև վոչինչ չեյին տեսնում: Տեսնելու բան ել հո չկար:

— Բարեհաճեցեք ձեր շորերը հանել ու կանգնել անա այս մեծ հայելու առաջ, — ասում են խաբեբաներն իշխանին: Մենք ձեզ նորերը կհագցնենք:


Իշխանը հանվում է, խաբեբաներն էլ նրան նոր շորեր են հագցնում, զուգուժարդարում: Նրանք ախպես են ցուլց տալիս, վոր իբրև թե շորերը մեկը մյուսի յետեից հագցնում են իշխանին և վերջապես իշխանական ծիրանին հագցնելիս՝ ուղղում են ուսերը, մեջքը, վոր լավ նստի: Իսկ իշխանն այդ ժամանակ հայելու առաջ այս ու այն կողմն եր դառնում:

— Ինչ հրաշալի նստում ե, — փսփսոց եր գալիս չքախմբից: Ինչ հրաշալի նկար, ինչ հրաշալի գույներ:

— Ժողովուրդն սպասում է, — զեկուցում է տալիս հանդեսի կառավարիչը:

— Յես պատրաստ եմ... Լավ է նըստում զգեստս, — ասում է իշխանը:

Իշխանը մի անգամ էլ դառնում է հայելու առաջ: Նա ուղղում եր ցուլց տալ, վոր ինքը շատ ուշադիր է դեպի նոր հագուստը:



Սենեկապետները, վոր պետք է բարձրացնեյին իշխանական ծիրանու քղանցքները, այնպես եյին ցույց տալիս, վոր իբրև թե հատակից մի բան են բարձրացնում և այդ տեսակ ել գնում եյին իշխանի յեւից, առաջ մեկնած իրենց ձեռքերը:

Իշխանը շատ հանդիսավոր գնում էր փողոցներով մի շքեղ ամպհովանու տակ, իսկ ժողովրդի մեջ խոսում եյին:

— Ախ, ի՞նչ զգեստ եւ ի՞նչ հրաշալի ծիրանի: Ի՞նչ հրաշալի նստում եւ իշխանի վրա:

Վոչ մի մարդ չէր խոստովանում, վոր բան չի տեսնում: Վոչ վոք չէր ցանկանում, վոր իր մասին տեսն թե նա հիմար եւ, բանի պետք չեւ: Յերբեք իշխանական զգեստը այնքան ցնծութուն առաջ չէր բերել, ինչպես հիմա:

— Չե վոր նա բոլորովին մերկ եւ, — հանկարծ բացականչում եւ մի փոքրիկ մանուկ:

— Լսեցեք թե ինչ եւ ասում ալդ լիբեխան, — ասում եւ հալրը: Այդտեղ սկսում

են մեկը մյուսին հաղորդել յերեխայի ասածը:

— Չե վոր իշխանը մերկ եւ, ալաղակում եւ ժողովուրդը:

Իշխանն իրեն վատ եւ զգում:

Նա հասկանում եւ, վոր ժողովուրդն իրավացի չեւ, բայց հանդեսն իր վերջին պիտի հասնեւ:

Իշխանն ամպհովանու տակ ավելի մեծափառ երգնում, քան թե առաջ, նրա լետեից գնում եյին բարձրաստիճան պալատականները բռնած ծիրանու քղանցքները, չեղած ծիրանու չեղած քղանցքները:

перевірено 1948



ՀՀ Ազգային գրադարան



NL0386499

1616



А. И. А. Р. Е. В. И.
ИЗДАНИЕ ПЛАТЯ КОРОЛЯ
ГЛАВНОЕ УПРАВЛЕНИЕ ЗАКАЗОВ

30 407.